

|                |                                                                                                                                                                                                                   |
|----------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ԴՎՔ            | Դրամավարկային քաղաքականություն                                                                                                                                                                                    |
| ԵԿԲ            | Եվրոպական Կենտրոնական բանկ                                                                                                                                                                                        |
| ԿԲ             | Կենտրոնական բանկ                                                                                                                                                                                                  |
| ԴՊՀ (ՖՊՀ)      | Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ                                                                                                                                                                           |
| ՍԳԻ, ԱԱԳ       | Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս                                                                                                                                                |
| ՀՆԱ            | Համախառն ներքին արդյունք                                                                                                                                                                                          |
| MoM            | Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը                                                                                                          |
| YoY            | Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը                                                                                                          |
| QoQ            | Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը                                                                                                      |
| WoW            | Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը                                                                                                                                                                     |
| K              | Հազար, ամերիկյան գրեյաձև                                                                                                                                                                                          |
| B              | Միլիարդ, ամերիկյան գրեյաձև                                                                                                                                                                                        |
| PMI            | Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները |
| Core (բազային) | Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տարանջատում ունեցող բաղադրիչներ                                                                                   |

## Օգտագործված աղբյուրներ

- ՀՀ տնտեսական ցուցանիշների տվյալների համար որպես աղբյուր օգտագործվել են ՀՀ Կենտրոնական Բանկի, Ազգային Վիճակագրական Ծառայության, Ֆինանսների նախարարության, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի, Համաշխարհային Բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի վիճակագրական բազաները, հրապարակումները և հաշվետվությունները,
- Արտաքին հատվածի տվյալների աղբյուրների համար տրված են բոլոր անհրաժեշտ հղումները

## Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ  
ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19  
Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Ա.Մաթասյան  
(010) 591 525, (010) 591 526

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ ապրիլ ամսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ գրանցել է 7.3% (YoY) աճ: Աճ է գրանցվել ՀՀ տնտեսության բոլոր ոլորտներում՝ բացառությամբ արդյունաբերության, որը գրանցել է 3.7% (YoY) անկում:
- Արդյունաբերության ոլորտում թողարկված արտադրանքի ծավալը կազմել է 121.6 մլրդ դրամ: Ներքին առևտրաշրջանառությունն աճել է 3.2%-ով՝ կազմելով 207.9 մլրդ դրամ, ծառայությունների ծավալն աճել է 20.7%-ով (YoY)՝ կազմելով 130.6 մլրդ դրամ:
- 2.1% (YoY) աճ է արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում՝ թողարկված արտադրանքի ծավալը կազմելով 49.1 մլրդ դրամ:




- Շինարարության ոլորտում պահպանվում են տարվա սկզբից գրանցվող աճի բարձր տեմպերը: Ապրիլին գրանցված աճը կազմել է 19.2% (YoY), իսկ հունվար-ապրիլին ՀՀ-ում իրականացվել է 64.8 մլրդ դրամ ծավալով շինարարություն՝ աճը կազմելով 21.8% (YoY):

## Գնային միջավայր

- 2018թ ապրիլ և մայիս ամիսներին գնաճը երկրում նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ կազմել է համապատասխանաբար 2.4% և 1.6% (YoY):
- Տարվա առաջին եռամսյակի արդյունքներով երկրում գրանցվել է 4.2% գնաճ (YoY):


- Ապրիլ ամսին գնաճի տեմպերը երկրում կրճատվել են՝ տարեկան կտրվածքով կազմելով 2.4% (YoY), իսկ մարտ ամսվա նկատմամբ գրանցվել է 0.3% (MoM) գնանկում, այդ թվում՝ սննդամթերքի (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) գները նվազել են 1%-ով, ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.4%-ով, իսկ ծառայությունների սակագները ավելացել 0.2%-ով (MoM):



- Մայիսին գնաճի տեմպերի նվազման միտումը պահպանվել է՝ տարեկան կտրվածքով արձանագրվելով 1.6% (YoY) գնաճ, այդ թվում՝ սննդամթերքի գները (ներառյալ ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչք, ծխախոտ) նվազել են 0.1%-ով, ոչ պարենային ապրանքներին աճել 5.2%-ով, իսկ ծառայությունների սակագներն ավելացել 1.7%-ով (YoY):
- Ամսական կտրվածքով գրանցվել է 1% (MoM) գնանկում, ինչն առավելապես պայմանավորվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 2.8% գնանկումով: Ոչ պարենային ապրանքների շուկայում և ծառայությունների ոլորտում գրանցվել է գների և սակագների՝ համապատասխանաբար 0.1% և 0.2% աճ (MoM):
- Մայիս ամսվա համար ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից սահմանափակ քանակությամբ ապրանքներից բաղկացած զամբյուղի գծով հաշվարկվող գնաճը կազմել է 0.9% (YoY), իսկ նախորդ ամսվա նկատմամբ գնանկումը՝ 1.26%:

## ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ ապրիլին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 130.7 մլրդ դրամ, ծախսերը՝ 95.5 մլրդ դրամ՝ ապահովելով պրոֆիցիտ՝ 35.2 մլրդ դրամ:
- Նախորդ ամսվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների աճը կազմել է 27.9%, իսկ ծախսերը կրճատվել են 23.2%-ով (MoM):<sup>1</sup>



- ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ 2018թ հունվար-ապրիլ ժամանակահատվածի ցուցանիշների համաձայն պետական բյուջեի եկամուտների գծով ապահովվել է կիսամյակային պլանային ցուցանիշի 61.8%-ը, ծախսերի գծով՝ 51.4%-ը, արդյունքում՝ պետական բյուջեի սալդոն գերակատարվել է 108.2%-ով:


<sup>1</sup> 2018թ ցուցանիշները ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացվում են համաձայն 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ և 456-րդ հոդվածների, ըստ որի՝ «Հարկեր և տուրքեր» ցուցանիշում առանձնացվել է «Հարկերի անցումային գերավճար» ցուցանիշը: Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների մասով ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի ցուցանիշների հետ՝ աճի տեմպեր չեն հաշվարկվել:

**Հայաստանի Հանրապետության 2018թ հունվար-ապրիլի պետական բյուջեի  
կատարման վերաբերյալ, մլրդ դրամ**

|                                                     | <b>Հվ-ապ<br/>փաստացի</b> | <b>Կիսամյակային<br/>ճշտված պլան<sup>1</sup></b> | <b>Պլանի<br/>կատարողական (%)</b> |
|-----------------------------------------------------|--------------------------|-------------------------------------------------|----------------------------------|
| <b>ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>                                   | <b>386.4</b>             | <b>625.7</b>                                    | <b>61.8%</b>                     |
| այդ թվում՝                                          |                          |                                                 |                                  |
| Հարկային եկամուտներ և<br>պետական տուրքեր            | 366.3                    | 578.7                                           | 63.3%                            |
| Պաշտոնական դրամաշնորհներ                            | 1.7                      | 16.5                                            | 10.3%                            |
| Այլ եկամուտներ                                      | 18.4                     | 30.6                                            | 60.2%                            |
| <b>ԾԱԽՍԵՐ</b>                                       | <b>377.5</b>             | <b>735.0</b>                                    | <b>51.4%</b>                     |
| այդ թվում՝                                          |                          |                                                 |                                  |
| 1. Ընթացիկ ծախսեր                                   | 360.7                    | 639.5                                           | 56.4%                            |
| այդ թվում՝                                          |                          |                                                 |                                  |
| Աշխատանքի վարձատրություն                            | 42.6                     | 68.8                                            | 61.9%                            |
| Ծառայությունների եվ<br>ապրանքների ձեռքբերում        | 30                       | 75.9                                            | 39.5%                            |
| Տոկոսավճարներ                                       | 37.6                     | 68.5                                            | 54.9%                            |
| Սուբսիդիաներ                                        | 29.9                     | 51.2                                            | 58.4%                            |
| Դրամաշնորհներ                                       | 37.3                     | 62.6                                            | 59.6%                            |
| Սոցիալական նպաստներ եվ<br>կենսաթոշակներ             | 35.3                     | 57.0                                            | 61.9%                            |
| Այլ ծախսեր                                          | 55.9                     | 106.7                                           | 52.4%                            |
| 2. Ոչ ֆինանսական ակտիվների<br>հետ գործառնություններ | 16.8                     | 95.5                                            | 17.6%                            |
| այդ թվում՝                                          |                          |                                                 |                                  |
| Ոչ ֆինանսական ակտիվների<br>գծով ծախսեր              | 19.8                     | 20.3                                            | 97.5%                            |
| Ակտիվների օտարումից<br>մուտքեր                      | 3                        | 2                                               | 150%                             |
| <b>ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)</b>                          | <b>9</b>                 | <b>-109.2</b>                                   | <b>108.2%</b>                    |

- ՀՀ պետական պարտքն 2018թ ապրիլին կազմել է 6.9 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը 2017թ նույն ամսվա արժեքը գերազանցում է 14.2%-ով (YoY): Մարտ ամսվա ցուցանիշի նկատմամբ ՀՀ պետական պարտքի մեծությունը գրեթե անփոփոխ է մնացել:


- Միայն արտաքին պարտքն ապրիլի վերջի դրությամբ կազմել է 5.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ ավելանալով տարեկան 13.4%-ով (YoY): Ներքին պարտքն, իր հերթին, նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ավելացել է 11.8%-ով (YoY)՝ կազմելով 1.33 մլրդ ԱՄՆ դոլար:
- Հաշվի առնելով ՀՀ մշտական բնակչության թվաքանակը՝ բնակչության մեկ շնչի հաշվով պարտքը կազմում է 2,312.4 ԱՄՆ դոլար (2018թ ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմում է 2,969,900 մարդ):



## ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

### Արտաքին առևտուր

- 2018թ ապրիլին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 540.3 մլն ԱՄՆ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 24%-ով (YoY): Առևտրաշրջանառության կազմում արտահանման ծավալների աճը կազմել է 9.5%՝ հասնելով 180.1 մլն դոլարի, իսկ ներմուծման ծավալներն աճել են 32.8%-ով (YoY)՝ մինչև 360.2 մլն




ԱՄՆ դոլար:

- 2018թ մարտի նկատմամբ ապրիլին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշը նվազել է 12.5%-ով (MoM): Արտահանման ծավալները կրճատվել են 14.4%-ով, ներմուծման ծավալները՝ 11.6%-ով (MoM):
- ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն ապրիլին 2017թ ապրիլի համեմատ խորացել է 68.7%-ով (YoY)՝ մինչև -180.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ մարտի ցուցանիշի համեմատ՝ կրճատվել 8.7%-ով (MoM):

## Դրամական հոսքեր

- 2018թ ապրիլին դրամական միջոցների զուտ ներհոսքը ՀՀ նախորդ տարվա ապրիլի համեմատ աճել է 37.7%-ով՝ կազմելով 31.7 մլն ԱՄՆ դոլար:
- Նախորդ ամսվա նկատմամբ ցուցանիշը նվազել է շուրջ 15%-ով:
- ՌԴ-ից ստացվող դրամական փոխանցումներն ապրիլին մարտի համեմատ պահպանել են նույն ցուցանիշը, իսկ դեպի ԱՄՆ՝ կրճատվել 95%-ով (MoM):




| ՀՀ դրամական միջոցների զուտ ներհոսք, կառուցվածք ըստ երկրների, մլն ԱՄՆ դոլար |             |            |             |        |        |
|----------------------------------------------------------------------------|-------------|------------|-------------|--------|--------|
|                                                                            | Ապրիլ 2017թ | Մարտ 2018թ | Ապրիլ 2018թ | %, MoM | %, YoY |
| <b>Զուտ ներհոսք</b>                                                        | 23.0        | 37.2       | 31.7        | -14.9  | 37.7   |
| այդ թվում՝                                                                 |             |            |             |        |        |
| <b>ՌԴ</b>                                                                  | 18.3        | 38.7       | 38.7        | 0.0    | 111.5  |
| <b>ԱՄՆ</b>                                                                 | 0.3         | 3.7        | 0.2         | -94.9  | -34.1  |

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ և ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- 2018թ ապրիլին ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված դրամային վարկերի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ ավելացել են 17.3%-ով (YoY)՝ կազմելով 1.1 տրլն դրամ, արտարժույթայինը՝ 10.5%-ով (YoY)՝ կազմելով 1.7 տրլն դրամ:
- Բանկերի կողմից ներգրավված դրամային ավանդների ծավալները նույն ամսում ավելացել են 15%-ով (YoY)՝ կազմելով 1 տրլն դրամ, իսկ արտարժույթով ավանդների ծավալները կրճատվել են 2%-ով (YoY)՝ կազմելով 1.5 տրլն դրամ:
- Ի տարբերություն վարկերի, և դրամային և դոլարային ավանդների ծավալները մարտ ամսվա համեմատ կրճատվել են 2%-ով և 5.2%-ով (MoM) համապատասխանաբար՝ պայմանավորված ավանդատուների շրջանում զգուշավորության աճով:


- Ինչ վերաբերում է տոկոսադրույքներին, ապա դրամով վարկերի միջին տոկոսադրույքը 2017թ ապրիլի համեմատ 2018թ ապրիլին նվազել է 3.4 կետով՝ մինչև 12.6% մակարդակը, արտարժույթային վարկերինը՝ 0.2 կետով՝ մինչև 8.3%, դրամային ավանդների տոկոսադրույքների միջին



մակարդակը նախորդ տարվա ապրիլի 11.2%-ից 2018թ ապրիլին նվազել է մինչև 9.6%, իսկ արտարժույթայիններինը՝ 4.8%-ից մինչև 4.0%:

- Մարտ ամսվա համեմատ դրամային ավանդների տոկոսադրույքն աճել է 0.4 կետով, իսկ դոլարային ավանդներինը՝ 0.1 կետով (MoM):






## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

### ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- Ամբողջ մայիս ամսվա ընթացքում ԱՄՆ դոլարի շարժն առավելապես պայմանավորված էր ԱՄՆ ԴՊՀ հունիսյան նիստում դրամավարկային քաղաքականության բազային տոկոսադրույքի բարձրացման, ինչպես նաև ԱՄՆ-Չինաստան արտաքին առևտրի հետ կապված հայտարարությունների ֆոնին ձևավորված հնարավոր առևտրային պատերազմի սպասումներով:
- Մայիս ամսվա ընթացքում հրապարակված ԱՄՆ մակրոտնտեսական ցուցանիշները խոսում էին առավելապես դրական տեղաշարժերի մասին: Մասնավորապես, մանրածախ առևտուրը երկրում մայիս ամսին գրանցել է 0.8%<sup>2</sup> ամսական (MoM) աճ, ինչը գերազանցում է ինչպես սպասումները, այնպես էլ նախորդ ամսվա աճի ցուցանիշը: Առանց ավտոմեքենաների հաշվարկվող Core ցուցանիշը ևս գերազանցել է սպասումները՝ կազմելով 0.9%՝ նախկին 0.4% աճի փոխարեն:
- Միևնույն ժամանակ շարունակվում են դրական տեղաշարժերն ԱՄՆ աշխատաշուկայում. մայիս




<sup>2</sup> <https://www.census.gov>

ամսվա ընթացքում ոչ գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թիվն ավելացել է մոտ 223 հազարով այն դեպքում, երբ ապրիլին աճը կազմել էր ընդամենը 159 հազար: Գործազրկության մակարդակը նվազել է մինչև 3.8%<sup>3</sup> (վերջին 18 տարիների նվազագույն արժեք): Տարեկան գնաճը մայիս ամսին կազմել է 2.8%, իսկ Core ցուցանիշը, որը հաշվարկվում է առանց սեզոնային մեծ տատանումներ ունեցող սննդի և վառելիքի գների, կազմել է 2.2% (Core CPI): Նման պայմաններում, ինչպես և ակնկալվում էր, ԱՄՆ ՖՊՀ-ն արդեն հունիսյան նիստում հերթական անգամ բարձրացրեց դրամավարկային քաղաքականության բազային տոկոսադրույքը՝ վերջինս սահմանելով 1.75%-2% միջակայքում:

- Մայիս ամսվա ընթացքում ԴՎԲ խստացման սպասումների ֆոնին ԱՄՆ դոլարի ինդեքսը, որն արտացոլում է վերջինիս դիրքերը 6 հիմնական արժույթներից կազմված զամբյուղի նկատմամբ, գրանցել էր մոտ 2.54% աճ, իսկ հունիս ամսվա առաջին կեսին վերջինիս աճը կազմել է 0.57%:
- Որպես ԱՄՆ դոլարի վրա բացասաբար ազդող հիմնական գործոն շարունակում են մնալ հնարավոր առևտրային պատերազմների հետ կապված անորոշությունները:

- EUR/USD զույգը մայիս ամսվա ընթացքում գրանցեց ավելի քան 3.2% անկում՝ պայմանավորված ինչպես ԵՄ առանձին երկրներում բացասական տնտեսական և քաղաքական գործոններով, այնպես էլ ԱՄՆ դոլարի ուժեղացմամբ: Մի կողմից Իտալիայում ստեղծված քաղաքական խնդիրները, մյուս կողմից մի շարք բացասական մակրոտնտեսական ցուցանիշների հրապարակումն ու ԱՄՆ ԴՊՀ և ԵԿԲ տարամետ դրամավարկային քաղաքականությունները, փաստորեն, հանգեցրին եվրոյի դիրքերի թուլացմանը:




- Արդեն հունիս ամսին ԵԿԲ հերթական նիստից հետո, երբ տոկոսադրույքները պահպանվեցին նախկին մակարդակներում (վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ 0.0%, ավանադադրման տոկոսադրույք՝ -0.4%) և հայտարարվեց, որ քանակական մեղմացման ծրագրի շրջանակներում ակտիվների գնումները կշարունակվեն մինչև 2018թ. վերջ (ամսական 15 մլրդ եվրո ծավալով), իսկ տոկոսադրույքների բարձրացում կլինի 2019թ. երկրորդ կեսից ոչ շուտ, EUR/USD փոխարժեքի անկումային դինամիկան շարունակվեց (նիստից անմիջապես հետո EUR/USD-ն գրանցեց ավելի քան 2.3% անկում՝ հասնելով 1.1570-ից ցածր արժեքների):


<sup>3</sup> <https://www.bls.gov/cpi/>

- ԵԿԲ կողմից նվազեցվել է ԵՄ տնտեսական աճի կանխատեսումը՝ նախկին 2.4%-ից մինչև 2.1%: Գնաճի կանխատեսումը բարձրացվել է նախկին 1.4%-ից մինչև 1.7%, ինչպես 2018թ., այնպես էլ 2019թ. համար:

- 2018 թվականի ընթացքում առավել արագ աճ գրանցած արժույթներից էր բրիտանական ֆունտը, սակայն տարվա սկզբից վերջինիս գրանցած ամբողջ աճը չեզոքացվեց, երբ ի հայտ եկան Մեծ Բրիտանիայի տնտեսության թուլացման որոշ ազդակներ և Անգլիայի Բանկի կողմից դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի բարձրացման սպասումներն զգալիորեն նվազեցին:





- Մայիս ամսվա ընթացքում GBP/USD զույգը գրանցեց մոտ 3.4% անկում: Փոխարժեքի նվազմանը նպաստեց նաև ԱՄՆ դոլարի ուժեղացումը:



- Ռուսական արժույթի վրա ապրիլյան կտրուկ անկումից հետո մայիս ամսվա ընթացքում շարունակում էին ճնշում գործադրել ՌԴ նկատմամբ պատժամիջոցներն ու ՌԴ ԿԲ կողմից արտարժույթի գնումների իրականացումը, սակայն նավթի գների զգալի աճը որոշ չափով կոմպենսացրեց վերջինիս անկումը, ինչի արդյունքում USD/RUB զույգն ամսվա ընթացքում նվազեց մոտ 0.85%-ով:
- ՌԴ ԿԲ-ն, ինչպես և սպասվում էր, հունիսյան նիստում որոշեց անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ վերջինս պահպանելով 7.25% մակարդակում: Կենտրոնական բանկը բաժրացրեց գնաճի կանխատեսվող մակարդակը՝ հաշվի առնելով ավելացված արժեքի հարկի առաջարկվող բարձրացման հանգամանքը: 2018թ. համար կանխատեսվում է 3.5%-4% գնաճ, իսկ 2019թ. համար՝ 4%-4.5%:

## ԱՊՐԱՆՔԱՅԻ ՇՈՒԿԱ

- Brent նավթի մեկ բարելի գինը մայիս ամսին հասավ մինչև 80.5 ԱՄՆ դոլար առավելագույն արժեքի՝ ամսական կտրվածքով գրանցելով մոտ 3.22% աճ:
- Շարունակում են աճել ԱՄՆ-ում նավթի արդյունահանման ծավալները՝ վերջին տվյալներով օրական արդյունահանման ծավալները կազմում են 10.9 մլն. բարել<sup>4</sup>:
- Նավթի գնի վրա արդեն հունիս ամսվա սկզբից որոշակի ճնշում գործադրեցին ՕՊԵԿ-ի և այլ նավթ արտահանող երկրների կողմից արդյունահանման ծավալների կրճատման համաձայնագրի դադարեցման սպասումները: Առաջիկա հանդիպումը տեղի կունենան հունիսի 22-ին:
- Ոսկու մեկ ունցիայի գինը մայիս ամսվա ընթացքում գրանցեց մոտ 1.22% անկում՝ հիմնականում պայմանավորված ԱՄՆ ՖՊՀ նիստի սպասումներով:
- Անկումային դինամիկան պահպանվեց նաև հունիս ամսվա առաջին երկու շաբաթների ընթացքում: Հունիսյան նիստում ԱՄՆ ՖՊՀ կողմից ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացումը հանգեցրեց ԱՄՆ դոլարի դիրքերի ուժեղացմանը, ինչը մի կողմից ռիսկի նկատմամբ հակվածության աճի ֆոնին հուսալի ակտիվների նկատմամբ պահանջարկի լուրացման և մյուս կողմից այլ արժույթներ տնօրինողների համար դոլարով գնանշվող ոսկու թանկացման ֆոնին հանգեցրեց ոսկու գնի նվազմանը:
- ԱՄՆ ՖՊՀ և ԵԿԲ նիստերից հետո ոսկու գինը գրանցեց ավելի քան 2.5% անկում՝ հասնելով մեկ ունցիայի դիմաց 1276 ԱՄՆ դոլարից ցածր արժեքների (2017թ. դեկտեմբերից հետո գրանցված նվազագույն արժեքներ):



<sup>4</sup> <https://www.eia.gov/dnav/pet/hist/LeafHandler.ashx?n=PET&s=WCRFPUS2&f=W>